


# ՍԱ ԻՆՉ ԹԱՐԱԽ Է, ՈՐ ՉԻ ՊԱՅԹՈՒՄ

Posted on November 27, 2013 by Keghart



Category: [Opinions](#)



✘ Աշխեն Քեշիշյան, [Հրապարակ](#), 27 Նոյեմբեր 2013

✘ "15 տարի առաջ մուժ ու ցուրտ տարիներին գիտեիք, որ պատերազմի մեջ ենք ու հաղթելու ենք, թունելի ծայրին լույս էինք տեսնում, իսկ հիմա դա չկա, եւ հույսը կտրորող թուրքն ու ազերին չեղան:"

✘ Աշխեն Քեշիշյան, [Հրապարակ](#), 27 Նոյեմբեր 2013

✘ "15 տարի առաջ մուժ ու ցուրտ տարիներին գիտեիք, որ պատերազմի մեջ ենք ու հաղթելու ենք, թունելի ծայրին լույս էինք տեսնում, իսկ հիմա դա չկա, եւ հույսը կտրորող թուրքն ու ազերին չեղան:"

Իմ գրուցակիցն է բանասեր, պատմաբան, գեղարվեստագետ, թարգմանիչ, ՀՀ քաղաքացի Արծվի Բախչիկյանը:

**- Արծվի, եկ ամփոփենք տարին՝ կանգնած ենք Մաքսային միությանը միանալու շեմին, Նորից ակցիաներ, բողոքներ, բռնկվող ու մարող հեղափոխություններ, արտագաղթող մարդկանց թվի աճ, նաեւ հոգեբանական Է՛լ ավելի մեծ անկում՝ Վարդան Պետրոսյանին անվանեցին «դեռասան» ու կալանավորեցին: Տարին տխուր ենք ավարտում...**

- Իհարկե տխուր, ավելի ճիշտ՝ մտահոգ, քանի որ անդունդը, որի մեջ արդեն իսկ հայտնվել ենք, ավելի ու ավելի անտանելի է դառնում: Քո նշած բոլոր այդ երեւոյթները (որի շղթան, ցավոք, կարելի է շատ երկարացնել) լրջագույն պատճառներ են, որ 2013 թվականին Հայաստանի Հանրապետության քաղաքացին ապահով հորջորջվող իր երկրում իրեն կրկին զգա կարիքի մեջ, անզոր, խաբված, չպաշտպանված եւ չունենա նորմալ կյանքի հույս ու հեռանկար:

Ամեն առավոտ համացանց մտնելիս դողը սրտումս է՝ սպասելով կարդալ, թե մեզ համար էլի՛ ինչ «հաճելի» անակնկալներ են պատրաստել մեր ազգընտիր իշխանությունները, էլի՛ ում են անմեղ տեղը կալանելու եւ ում մեղավոր տեղը՝ չկալանելու, էլի՛ ինչ պատմական հետք են ջնջելու, էլի՛ ինչ բնության մասնիկ են ավերելու, էլի՛ ինչ խոշոր յուրացումներ են կատարելու իմ եւ քո աշխատավարձի հաշվին, էլի՛ ում հացն են կտրելու... եւ այլն, եւ այլն: [Վարդան Պետրոսյանի դեպքը](#) նշելով՝ մատդ դրեցիր մի ցավի վրա, այն է՝ ռեժիմը բացահայտ դարձրեց այլախոհի, իրական ընդդիմադիրի, ժողովրդական մարդու, իսկական մտավորականի հանդեպ իր հայտարարած տարիների պատերազմը: Առանց չափազանցության կարող եմ ասել, որ կյանքիս ամենածանր պահերից մեկն ապրեցի՝ Նոյեմբերի 9-ի ցուրտ գիշերն ականատես դառնալով, թե ինչպես դեռեւս չապաքինված, ողջ օրը սոված-ծարավ թողնված (ասել է թե՛ խոշտանգված) Վարդանին պատգարակով դուրս բերեցին Կոտայքի դատարանից ու դրեցին ոստիկանական մեքենան՝ առանց իրավական որեւէ հիմքի:

Այդ պահին այնքան շոշափելի հասկացա, որ Հայաստանում, ցավոք, արդարադատություն չի եղել ու չկա, որ այս ցինիկ ռեժիմը կատարված ողբերգությունը գործածում է հանուն իր շահերի՝ հանրությանն էլ ավելի ճնշել-ճզմելու նպատակով: Եվ ո՞ր կորան տարիներ շարունակ իշխանությունների դեմ սուր ճոճողները, արմատական ընդդիմադիր այրերը, ա՞յս Հայաստանն էին նրանք երագում, էլ ոչ մի պայքարելու բան չմնա՞ց: Թե՞ ամենքը, մի-մի տաքուկ անկյուն ստանալով, սսկվեցին ու մոռացան ամեն ինչ...

**- Ինքնին հասկանալի է, որ նման պայմաններում քեզ համար պիտի որ հեշտ չլիներ կենտրոնանալ հետազոտական կամ թարգմանական գործունեության վրա...**

- Երանի այնպիսի ժամանակներ լինեին, որ հարցազրույց տալիս ստիպված չլինեի քաղաքականության մասին ամենափոքրիկ իսկ ակնարկն անելու, քանի որ, այո, իմ աշխարհներն ուրիշ են: Ճիշտ է, այս տարի էլ տարբեր հետաքրքրական գործեր կատարեցի, տպագրվեց իմ թարգմանությամբ երկու գիրք, եւս երեք թարգմանություն էլ ճանապարհին են, կատարվեց վաղեմի երագանքս՝ նկարահանվեցի կինոյում մի փոքր դերով, հրավեր ստանալով Հայաստանում ֆիլմ ստեղծող ամերիկացի կինոգործիչներից...

Սակայն անձնական այս հաջողություններն ինձ երբեք լիակատար երջանկություն չեն պարգեւում, երբ շուրջս համատարած անարդարություն է, ամենաթողություն, բռնություններ, ոգու ու նյութի աղքատություն ու տեսակի պատերազմ: Այնքան լավ եմ հասկանում մեծն Ֆահնա Ռանեւսկայային, երբ նա ասում էր. «Ինչպես եմ նախանձում անուղեղներին»: Նայում եմ շուրջս՝ քիչ չեն այնպիսի մտավորականներ ու արվեստագետներ, ովքեր ապրում են իրենց նեղ անձնական ու մասնագիտական կյանքով ու բոլորովին անտարբեր են, որ Հայաստանում տասնյակ գյուղեր արդեն դատարկվել են, որ ոչ մի օրենք չի գործում, որ բանտերում կան անմեղ դատապարտյալներ, իսկ ազատության մեջ շրջում են ոճրագործներ, որ մեր երագած անկախությունն իրականում անկախության տնագ եղավ, ու նորից նստում ենք կտորած տաշտակի առջեւ:

Գուցե դա էլ նրանց պաշտպանվելու ձեւն է, Աստված նման կրիաների ու ջայլամների հետ: Սակայն պարզապես եղկելի է, երբ գտնվում են իբրեւ թե հարգարժան խելոք մարդիկ, որոնք պաշտպանում են ցանկացած հակազգային քայլ՝ լինի օտարալեզու դպրոցներ վերաբացելը, ինչ-որ անհայտ ու կասկածելի միությանը միանալը, չհիմնավորված թանկացումները կամ պատմական հուշարձանի աղավաղումը: Նման «մտավորականներն» իրենց պատասխանատու չե՞ն զգում գալիք սերնդի առջեւ, թե՞ վստահ են, որ գալիք սերունդ այլեւս չի լինելու, բոլորը կլինեն կա՛մ արտագաղթած, կա՛մ ստրկացված ու մանկուրտացված:

Պետական այրերի եւ օլիգարխների գավակները, անշուշտ, մտածելու բան չունեն, նրանք դրսերում վաղուց տուն ու տեղ ունեն դրած, քանի որ, բնականաբար, չեն ուզի ապրել մի երկրում, որտեղ կյանքն անտանելի է դարձել իրենց հայրերի պատճառով: Չէի ուզի, որ խոսքս այսքան մռայլ ստացվեր, բայց սա է մեր իրականությունը. 15 տարի առաջ մուժ ու ցուրտ տարիներին գիտեինք, որ պատերազմի մեջ ենք ու հաղթելու ենք, թունելի ծայրին լույս էինք տեսնում, իսկ հիմա դա չկա, եւ հույսը կտրողը թուրքն ու ազերին չեղան:

Ու ինդրեմ, սիրելի հայրենակիցներ, գլխիս քարոզներ չկարդաք, թե նմա'ն ժամանակներ է տեսել մեր ժողովուրդը, չմոռանալով հիշատակել հայ ազգի` փյունիկ թռչուն լինելու կամ Աստծո պահած ժողովուրդը լինելու մասին նեյնիմները: Միայն եթե կարող եք, շատ կուզեի բացատրեք` սա ի'նչ թարախ է, որ համառորեն չի պայթում...

